ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾԶԲ-12/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ

ք. Երևան

07.08.2017թ.
ժամը 11[00]

Բացողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ֆինանսական վարչության ֆինանսական հոսքերի բաժնի 1-ին կարգի մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի առաջատար ծառայող Ս. Սալայան,

ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության ՀԿ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Ավագյան:

Օրակարգը՝

1. **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԲՄԾԶԲ-12/6»** ծածկագրով բաց մրցույթին **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում ներկայացված հայտերը:

Սահմանված ժամկետում **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում բեռնվել է ներքոհիշյալ մասնակիցների հայտը, որը սահմանված կարգով հաստատվել և ներկայացվել են գնահատման հաջորդ փուլ.

Սահմանված կարգով ներկայացված մասնակիցների հայտեր, որոնք ընդունվել են **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքի կողմից և համարվել են հետագա գնահատման համար ընդունելի .

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Ստատուս-Մ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

բացող Ս. Սալայան

բացող Ա. Ավագյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԲՄԾՁԲ-12/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

07.08.2017թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Գնահատողներ

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետի ՊԺԿ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Է. Համբարձումյան,

ՀՀ ՊՆ ՌՈ հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյան,

ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության ՎՏԱ բաժնի պետ, Կ. Պողոսյան, ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԲՄԾՁԲ-12/6» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովինիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Ամիրյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/6» ծածկագրով բաց մրցույթի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/6» ծածկագրով բաց մրցույթի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/6» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել մեկ մասնակից.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Ստատուս-Մ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/6» ծածկագրով բաց մրցույթի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

(Ա. Ամիրյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած բոլոր փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացի հայտի ապահովման վճարման պահանջագրից՝ մասնավորապես ներկայացված պիանջագրի 13-րդ տողում լրացվել է միայն

«հայկական դրամ» և նշված չէ արժույթի կոդը: Հիմք ընդունելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և դիմել Լիազոր մարմին՝ խնդրի վերաբերյալ պարզաբանում ստանալու կապակցությամբ: 07.09.2017թ. (պարզաբանման պատասխանը ստացվել է 07.09.2017թ.) շարունակելով մասնակցի հայտի գնահատման նիստը, գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով լիազոր մարմնի ներկայացրած պարզաբանումը որոշեց մասնակցի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Ամիրյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 1 մասնակից .

Հ/Հ	Ծառայության անվանումը	Չ/Մ	Քանակը	Նախահաշվ. գինը	«Ստատուս-Մ» ՍՊԸ-ի գնային առաջարկ		1-ին տեղ զբաղեցնող մասնակից
					առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	
1	Տեղեկատվական տեխնոլոգիաների հետ կապված ծառայություններ	դրամ	1	20369000	20369000	20369000	«Ստատուս-Մ» ՍՊԸ

Ըստ ներկայացված տեղեկությունների «Ստատուս-Մ» ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող չէ:

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, սույն ընթացակարգի հրավերի 8.5 և 8.6 կետերը և քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄՃԲ-12/6» ծածկագրով ընթացակարգին հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, գնահատող հանձնաժողովը որոշեց, գների նվազեցման նպատակով 12.09.2017թ. ժամը 10^{30}-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ: Նշված օրը և ժամին ներկայացավ «Ստատուս-Մ» ՍՊԸ-ի տնօրենը և բանակցությունների արդյունքում նախկինում ներկայացրած գինը թողեց անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄՃԲ-12/6» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Ամիրյան)

4.1 13.09.2017թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄՃԲ-12/6» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Ստատուս-Մ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄՃԲ-12/6» ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Ամիրյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Ամիրյան)

6.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄՃՁԲ-12/6» ծածկագրով բաց մրցույթի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ սույն ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Վ. Գասպարյան

Գնահատող, Ա. Հակոբյան

Է. Համբարձումյան

Կ. Պողոսյան

Ա. Մաղաքյան

Գնումների համակարգող՝ Ա. Ամիրյան